ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«08» 11 2024թ.
No 013330

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Գ. Նժդեհի փ., շ. 45, բն. 21,
էլ. փոստի հասցե՝ nonams@mail.ru)

Հարգելի՛ տիկին Մարտիրոսյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 5-ի «Անհատ ձեռնարկատեր Նոնա Մարտիրոսյանի վերաբերյալ թիվ ՀԳ-03642/24 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 766-Ա որոշման պատճենը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ **Համակարգ**) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «2» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Կատարող՝ Շուշանիկ Ղազարյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (271)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 25 նոյեմբերի 2024 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 նոյեմբերի 2024 թվականի թիվ 766-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-03642/24 ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի նոյեմբերի 5-ի նիստում, քննարկելով անհատ ձեռնարկատեր Նոնա Մարտիրոսյանի (այսուհետ նաև՝ **ԱՁ Ն. Մարտիրոսյան**) վերաբերյալ թիվ ՀԳ-03642/24 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Հանձնաժողովը 2024 թվականի օգոստոսի 6-ի «Անհատ ձեռնարկատեր Նոնա Մարտիրոսյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 474-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 474-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-03642/24 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Վարույթը հարուցված է «զարգացման և ուսումնական կենտրոն» և «նախակրթարան» բառերի օգտագործմամբ գործունեություն իրականացնելու առնչությամբ ԱՁ Ն. Մարտիրոսյանի վարքագծում ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

ԱՁ Ն. Մարտիրոսյանը թիվ 474-Ա որոշումը ստացել է 2024 թվականի օգոստոսի 28-ին, իսկ Վարույթի առնչությամբ ԱՁ Ն. Մարտիրոսյանի գրավոր դիրքորոշում Հանձնաժողովում չի ստացվել:

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2024 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 12883 գրությամբ (այսուհետ նաև՝ թիվ 12883 գրություն) ԱՁ Ն. Մարտիրոսյանին է ուղարկվել Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության (այսուհետ նաև՝ Պատասխանատու ստորաբաժանում) կողմից կազմված «Անհատ ձեռնարկատեր Նոնա Մարտիրոսյանի վերաբերյալ թիվ ՀԳ-03642/24 վարույթում առկա

փաստական հանգամանքների մասին» տեղեկանքը (այսուհետ նաև՝ **Տեղեկանք**) և ԱՁ Ն. Մարտիրոսյանին առաջարկվել է Տեղեկանքի առնչությամբ ներկայացնել գրավոր դիրքորոշում, որը սույն որոշման ընդունման պահի դրությամբ Հանձնաժողովում չի ստացվել:

Վերոգրյալի հաշվառմամբ Պատասխանատու ստորաբաժանումը 2024 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ ՄՊՀ-012949 զեկուցագրով, ի թիվս այլնի, առաջարկել է եռամսյա ժամկետով երկարաձգել Վարույթի ժամկետը՝ հայտնելով, որ Վարույթի ժամկետը լրանում է 2024 թվականի նոյեմբերի 6-ին, իսկ Տեղեկանքի առնչությամբ ԱՁ Ն. Մարտիրոսյանին լսված լինելու իրավունքն իրացնելու, անհրաժեշտության դեպքում հավելյալ տեղեկատվություն ձեռք բերելու, ինչպես նաև Վարույթի շրջանակում գործի բազմակողմանի և լրիվ քննությանն ուղղված այլ գործողություններ կատարելու համար՝ Վարույթի իրականացման՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով (այսուհետ նաև՝ **Օրենք**) սահմանված եռամսյա ժամկետը բավարար չէ:

Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի ժամկետը երեք ամիս է:

Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի պատճառաբանված որոշմամբ վարույթի ժամկետը մեկ անգամ կարող է երկարաձգվել մինչև երեք ամսով:

Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ Վարույթի ժամկետն անհրաժեշտ է եռամսյա ժամկետով երկարաձգել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Վարույթի ժամկետն անհրաժեշտ է եռամսյա ժամկետով երկարաձգել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2024 թվականի նոյեմբերի 6-ից եռամսյա ժամկետով երկարաձգել անհատ ձեռնարկատեր Նոնա Մարտիրոսյանի վերաբերյալ թիվ ՀԳ-03642/24 վարույթի ժամկետը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2024 թ. նոյեմբերի 5
Երևան